

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Արմավիրի մարզի Էջմիածին քաղաքի <<Վաղարշապատի հիվանդանոց>> ՊՓԲԸ-ն հայտարարում է մրցույթ հետևյալ թափուր պաշտոնների համար՝

բժիշկ պաթանատոմ	- 0.75 հաստիք
քիթ-կոկորդ, ականջաբան	- 1.0 հաստիք
քիթ-կոկորդ, ականջաբան մանկական	- 0.5 հաստիք
ուրուլոգ	-0.5 հաստիք
սոնոգրաֆիստ	-0.25 հաստիք
մանկական բաժանմունքի բուժքույր	- հերթապահ-2
վիրակապարանի բուժքույր	-հերթապահ

ՀՀ Կառավարության 2011թ հունիսի 10-ի թիվ 22 արձանագրային որոշման պահանջներով բաց մրցույթի մասնակից կարող է լինել ցանկացած անձ, ով կրավարարի ստորև նշված պայմաններին՝

- ա) բարձրագույն մասնագիտական կրթության առկայություն բժշկի թափուր տեղի համար,
- միջնակարգ մասնագիտական կրթություն բուժքրոջ թափուր տեղի համար
- բ) բժշկական էթիկայի կանոնների իմացություն

✓ Լրացուցիչ պայմաններ

- ա) համակարգչով աշխատելու իմացություն
- բ) առնվազն մեկ օտար լեզվի իմացություն
- գ) տրամաբանելու և տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն

Մրցույթին կարող են մասնակցել գրական հայերենին տիրապետող ՀՀ քաղաքացիները, ինչպես նաև օտարերկրյա քաղաքացիները, ովքեր ունեն կացության կարգավիճակը հաստատող փաստաթուղթ, աշխատանքի թույլտվություն և ում կրթական փաստաթղթերը սահմանված կարգով ճանաչվել են ՀՀ-ի կողմից:

Թափուր տեղի հավակնորդների կողմից ներկայացվում է՝

1. դիմում(լրացվում է տեղում)
2. մեկ լուսանկար 3x4 չափի
3. տեղեկանք աշխատանքային ստաժի մասին (առկայության դեպքում)
4. ինքնակենսագրություն
5. անձնագրի պատճեն և բնօրինակը
6. ա/բարձրագույն և հետբուհական կրթությունը հավաստող դիպլոմի և վերապատրաստման վկայականների պատճենները և բնօրինակները /բժշկի թափուր տեղի համար/  
բ/միջնակարգ մասնագիտական կրթությունը հավաստող դիպլոմի պատճենը և բնօրինակը / բուժքրոջ թափուր տեղի համար/
7. արական սեռի անձինք՝ նաև զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր գորակոչային տեղամասի կցագրման վկայականի պատճենը
8. նախորդ աշխատավայրից բնութագիր(առկայության դեպքում)
9. օտարերկրյա քաղաքացիները՝ ՀՀ-ում կացության կարգավիճակը հաստատող փաստաթուղթ և աշխատանքի թույլտվություն:

Անհրաժեշտ փաստաթղթերը հանձնելուց հետո մրցույթի մասնակիցները կձանոթանան այն իրավական ակտերի ցանկին, որոնցից բաղկացած է լինելու հարցատոմար:

Փաստաթղթերը ընդունվում են <<Վաղարշապատի հիվանդանոց>> ՊՓԲԸ-ում ամեն օր ժ. 10<sup>00</sup>-15<sup>00</sup>, բացի շաբաթ և կիրակի օրերից ( ՀՀ Արմավիրի մարզ, քաղաք Էջմիածին Սպանդարյան 1, հեռախոս 5-57-20):

**Դիմումների ընդունման վերջնաժամկետն է 23.08.2019թ:**

**Մրցույթը կկայանա 10.09.2019թ .ժամը 12<sup>00</sup>-ին: <<Վաղարշապատի հիվանդանոց>> ՊՓԲԸ-ում :** Մրցույթին մասնակցել ցանկացող քաղաքացիները լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող են դիմել <<Վաղարշապատի հիվանդանոց>> ՊՓԲԸ-ի աշխատանքային խմբին:

Միաժամանակ տեղեկացվում է, որ մրցույթին մասնակցելու համար քաղաքացիների ներկայացրած փաստաթղթերը հետ չեն վերադարձվում:

<<Վաղարշապատի հիվանդանոց>> ՊՓԲԸ տնօրինություն